



**MILLENNIUM
CHALLENGE
CORPORATION**
REDUCING POVERTY THROUGH GROWTH



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամյո հաղորդագրություն

Հունիսի 11, 2008

Ի պատասխան ՀՄՀ-Հայաստանի Շահառուների խորհրդի խնդրանքի՝ ԱՄՆ դեսպանատանը Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) կողմից Հայաստանի 2008թ-ի ցուցանիշների գնահատման աղյուսակի ներկայացում և քննարկում տեղի ունեցավ: Ցուցանիշների աղյուսակը ներկայացրեց Հայաստանում ՀՄԿ գրասենյակի տնօրեն Ալեքս Ռասինը: Ներկայացմանը հետևեց հարց ու պատասխան ՀՄՀ-Հայաստանի Շահառուների խորհրդի անդամների և Հայաստանում ԱՄՆ դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատար Ժոզեֆ Փենինգթոնի միջև, որի ընթացքում Շահառուների խորհրդի անդամներին հնարավորություն էր ընձեռված հարցեր ուղղել Հայաստանի քաղաքական իրավիճակի և ՀՄԿ հետագա ֆինանսավորման վրա դրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ:

ՀՄՀ-Հայաստանի Շահառուների խորհուրդը խորհրդատվական մարմին է՝ բաղկացած կամավոր սկզբունքով ընտրված Հայաստանի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող և ծրագրի շահառու հանդիսացող 15 անդամից, որոնք օժտված են ծրագրի իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացներում լայն մասնակցային գործընթացի իրավասությամբ:

Հայաստանի վերաբերյալ ՀՄԿ 2008 թվականի չափորոշիչների աղյուսակին, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել՝

www.mcc.gov և www.mca.am :

###

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան (ՀՄԿ) ԱՄՆ պետական կազմակերպություն է, որն աշխատում է աշխարհի ամենաաղքատ երկրների հետ՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որ օժանդակությունն առավել արդյունավետ է, երբ տնտեսական աճի խթանումն ու ծայրահեղ աղքատության վերացումը իրականացվում է լավ կառավարման, տնտեսական ազատությունների ու մարդկային կապիտալի ոլորտում ներդրումների ամրապնդման ճանապարհով:

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: